Հաստատում եմ՝ Digitally signed by NIKOLYAN NAZIK 7412720015
Date: 2023.09.04 14:35:46 AMT

Դպրոցի տնօրեն Ն .Նիկոլյան

Աշտարակի Գր.Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի 2022-2023 ուստարվա կատարված աշխատանքների դասղեկի տարեկան հաշվետվություն

VII /ա/-դասարան

Դասղեկ՝ Նարինե Զիչյան

Հաշվետվություն

Ι-Կիսամյակ

Սեպտեմբեր – Ուսումնական տարին չսկսված կատարվել է այց Հ.Թումանյանի տուն թանգարան և մատենադարան:

Բաշխվել են դասագրքերը,կարգի է բերվել դասասենյակը:

Սովորողները մասնակցել են սեպտեմբերի 1-ին նվիրված միջոցառմանը:

Սովորողների հետ կատարվել է այց դեպի Աշտարակի եկեղեցիները,որի նպատակն էր ավելի սերտ կապ ստեղծել եկեղեցու,հոգևոր կյանքի հետ:

Կատարվել են այդ ամսվա դասղեկի բոլոր ժամերը,որոնք եղել են թեմատիկ և բովանդակալից,խոսվել է կարգապահական մի շարք հարցերի մասին:

Պատրաստվել է պատի թերթ <<Անկախության օրվա>> առթիվ:

Հոկտեմբեր-Ամիսն սկսվել է գեղեցիկ միջոցառմամբ,նվիրված

<< Ուսուցչի օրվան>>,որի ժամանակ VII /ա/-դասարանի հինգ աշակերտներ ստացել են բարձր առաջադիմության համար գովասանագրեր:

Պատրաստվել է պատի թերթ <<Իմ ուսուցիչը>> թեմայով:

Կատարվել են դասղեկի ժամերը,որոնց ժամանակ գրվել է շարադրություններ՝ <<Իմ ուսուցիչը>> և <<Իմ ընկերը>> թեմաներով:

Կատարել եմ նաև դասալսումներ տարբեր առարկաներից,որի նպատակն է եղել ՝ ստուգել սովորողների պատրաստվածությունը դասերին:

Կայացել են հանդիպումներ ծնողների և ծնողական խորհրդի հետ:

Նոյեմբեր-Պարբերաբար անցկացվել է զրույց կարգապահական,դաստիարակչական թեմաներով:

Պատրաստվել է պատի թերթ և անց է կացվել դասղեկի ժամ <<Սովորողի իրավունքներն ու պարտականությունները>> թեմայով :

Նորից կատարվել են դասալսումներ:

Տեղի է ունեցել հանդիպումներ ծնողների հետ,որտեղ քննարկվել են ուսումնական և կարգապահական մի շարք հարցեր:

Դեկտեմբեր- Այս ամիսը շատ ծանրաբեռնված ու կարևոր է սովորողների համար:

Պատրաստվել է պատի թերթ <<Աղետներ>>թեմայով,նայել ենք ֆիլմ նվիրված Դեկտեմբերի 7-ի աղետալից երկրաշարժին:

Պատրաստվել է պատի թերթ <<Ծնորհավոր Ամանոր>>վերնագրով,զարդարել ենք դասասենյակը,մասնակցել ենք նաև դպրոցի տոնածառի զարդարմանը և Ամանորյա միջոցառմանը՝ պարով:

Հաշվետվություն
II-Կիսամյակ

Ամփոփվել են I-կիսամյակի արդյունքները,պլանավորվել II-կիսամյակում կատարվելիք աշխատանքները:

Սովորողների հետ անցկացվել է զրույց ընկերասիրություն թեմայով ,ինչ է նշանակում <<Լավ ընկեր>>վերնագրով գրել են շարադրություն:

<<Հայոց բանակի>>տոնին ընդառաջ պատրաստվել է պատի թերթ <<Իմ Հայրենիքը>> թեմայով,խոսվել է հայրենիքի պաշտպանի՝ Հայ

զինվորի սխրանքների մասին:

VII /ա/-դասարանի աշակերտները մասնակցել են համադպրոցական միջոցառմանը՝ <<Կյանք հանուն կյանքի>> խորագրով:

Դասղեկի ժամին անցկացվել է զրույց Տերյանական թեմայով,սովորողները համացանցից բերել էին Վահան Տերյանի կյանքն ու գործունեությունը ,առավել ակտիվ աշակերտները ասմունքում էին:

Սովորողներին ներկայացվել է Տեառնընդառաջի տոնը,տոնի խորհուրդը, որից հետո կազմակերպվել է այց Սբ. Մարիանե եկեղեցի:

Մայրենի լեզվի տոնի,գիրք նվիրելու առթիվ VII /ա/-դասարանը պատրաստել էր գիրք՝ <<Հայ մատենագիրները>> վերնագրով,որը նվիրված էր մաթեմատիկոս,աստղագետ՝ Ա.Ծիրակացուն:Աշակերտները մեծ սիրով ու ջանասիրությամբ ը.Գ.Պապյանի աջակցությամբ պատրաստել էին այդ գիքը:

20.02.2023թ. – Հ.Թումանյանի գեղեցիկ բանաստեղծություններն ու քառյակները ներկայացնելով,գիրքը նվիրեցին դպրոցի գրադարանին:

27.02.2023 – VII /ա/-դասարանը այցելեց Աշտարակի մարզային գրադարան,որտեղ կազմակերպված էր միջոցառում նվիրված՝ Ա.Օզանյանին:

Գարնան առաջին օրվա՝ Մարտի 1-ին քաղպաշտպանության օրվա առիթով, անցկացվել է զրույց ԱԻ աղետներ թեմայով:Դիտել ենք ֆիլմ:

Դասղեկի ժամին անցկացվել է զրույց Ե.Չարենցի 126-ամյակի առթիվ,աշակերտները ասմունքել են բնաստեղծություններ:

Կանանց միջազգային օրվա առիթով VII /ա/-դասարանի աշակերտները պատրաստել էին գեղեցիկ բացիկներ,որոնք նվիրեցին դասավանդող ուսուցիչներին:

Կատարել եմ դասալսումներ մի շարք առարկաներից:

Անցկացվել է զրույց <<Արվեստն ու երաժշտությունը իմ կյանքում>> թեմայով:

Ապրիլ-մայիս -Դասղեկի ժամին անցկացվել է զրույց <<Առողջ ապրելակերպի>> կանոնների մասին,սովորողներին ներկայացվել է դրա կարևորությունը մարդու կյանքում,անձնական հիգիենայի կանոնները:

07.04.2023թ.-Կազմակերպվել է գեղեցիկ միջոցառում նվիրված <<Մայրության և գեղեցկության>> տոնին,որին սիրով ներկա են գտնվել տնօրեն՝ Ն.Նիկոլյանը,փոխտնօրենները,ուսուցիչները,ծնողները:

Աշակերտները մեծ խանդավառությամբ և պատասխանատվությամբ են վերաբերվել միջոցառմանը, տոնի խորհուրդը ներկայացնելով գեղեցիկ համարներով:

11.04.2023թ.-Կազմակերպվել է էքսկուրսիա Երևան,այցելել ենք Պատանի հանդիսատեսի թատրոն,դիտել ենք Նար-Դոսի <<Մեր թաղը>> ներկայացումը,այնուհետև այցելել ենք Երևանի ազգային պատկերասրահ և պատմության թանգարան:Երեխաները մեծ տպավորություններով վերադարձել են տուն:

15.04.2023թ.-Աշակերտները մասնակցել են դպրոցում կազմակերպված շաբաթօրյակին,մաքրել իրենց հատկացված տարածքը:

17.04.2023թ. – Աշակերտները համացանցից բերել էին ինֆորմացիա Սբ.Զատիկի տոնի մասին և գեղեցիկ ներկայացրեցին տոնի խորհուրդը,կազմակերպեցին ձվախաղ:

25.04.2023թ. – Անցկացվել է զրույց նվիրված <<Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին>>, սովորողները ներկայացրել են Մեծ Եղեռնի ժամանակ զոհ գնացած հայերի կենսագրությունը,դիտել ենք ֆիլմ:

Աշակերտները մասնակցել են դպրոցում կազմակերպված միջոցառմանը՝ գեղեցիկ ասմունքով:

26.04.2023թ.-Այցելություն է կազմակերպվել Աշտարակի մարզային գրադարան,այնտեղ աշակերտները մասնակցել են գեղեցիկ միջոցառմանը,որը նվիրված էր Մեծ Եղեռնին,Վանի հերոսամարտերին:

29.04.2023թ.-Աշակերտները ակտիվորեն մասնակցել են համապետական շաբաթօրյակին,մաքրել դասարանն ու բակը:

Սովորողների հետ անցկացվել է զրույց Աշխատավորի միջազգային օրվա մասին,խոսել ենք աշխատանքի դերի և նշանակության մասին:

Աշակերտների հետ անցկացվել է զրույց <<Մայիսյան հաղթանակները>> թեմայով , խոսել ենք հայ քաջ զինվորների,նրանց սխրանքների մասին:

Աշակերտներից առավել ակտիվները մասնակցել են դպրոցում կազմակերպված միջոցառմանը:

16.05.2023 - Մայիսի 16-ին VII /ա/-դասարանի մի քանի աշակերտների հետ մասնակցել ենք <<Լույսի միջազգային օրվան>> նվիրված գիտաժողովին՝ <<Լույսը և լուսային տեխնոլոգիաները մեր կյանքում>> թեմայով,որը վարում էր Ա. Պապոյանը:Այն տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում:

Տարվա ընթքցքում կայացել է հինգ ծնողական ժողով:

Ամբողջ տարվա ընթացքում անցկացրել եմ դասալսումներ՝ VII /ա/-դասարանում բոլոր առարկաներից:

Սովորողները մասնակցել են նաև համադպրոցական միջոցառմանը՝ <<Երգ –երգոցին>>:

Հավաքվել են դասագրքերը ,ամփոփվել է 2022-2023 ուումնական տարին: